Հայտատուի իրավունքները

- Արտադրանքի համապատասխանության գնահատման համար դիմել արտադրանքի սերտիֆիկացման մարմին:
- Գանգատների և բողոքների առկայության դեպքում դիմել «ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ-ին:
- Տեղեկանալ արտադրանքի համապատասխանության գնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին:
- Արտադրանքի սերտիֆիկացման մարմնից պահանջել պահպանել աշխատանքի ընթացքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը:

Հայտատուի պարտավորությունները

- Սահմանված ձևով լրացված հայտերը ներկայացնել ՍՄ:
- Պահպանել ՍՄ-ի կողմից և ստանդարտացման փաստաթղթերով սահմանված համապատասխանության գնահատման ընթացակարգերի պայմանները և տրամադրել տարբեր տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են արտադրանքի համապատասխանությունը հավաստելու համար:
- Հայտարարագրման սխեմաների պահանջներին համապատասխան հայտարարագիր գրանցելիս տրամադրել պահանջվող փաստաթղթերի պատճենները:
- Ապահովել փորձարկման համար նմուշներ վերցնելու հնարավորությունը:
- Պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել արտադրանքի համապատասխանության գնահատման աշխատանքների համար:
- Կատարել պայմանագրով սահմանված պարտավորությունները:
- Պահպանել գրանցված համապատասխանության հայտարարագիրը և ապացուցողական նյութերը համապատասխան ստանդարտացման փաստաթղթում սահմանված ժամկետով:
- Ապահովել իրացվող արտադրանքի համապատասխանությունը սերտիֆիկացման պահանջներին:
- Կատարել սերտիֆիկացման պահանջները, այդ թվում՝ համապատասխան փոփոխությունների իրականացումը, երբ դրանք պահանջվում են ՍՄ-ի կողմից:
- Կատարել սերտիֆիկացված արտադրանքի համար սահմանված պահանջները:
- Եթե սերտիֆիկացումը վերաբերում է գործող արտադրությանը, ապա սերտիֆիկացված արտադրանքը շարունակաբար համապատասխանի արտադրանքին ներկայացվող պահանջներին:
- Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝

1) գնահատման և հսկողության (եթե պահանջվում է) իրականացման համար, այդ թվում՝ ուսումնասիրության համար փաստաթղթերի և գրառումների տրամադրումը, և

համապատասխան սարքավորումների, տեղանքի(ների), տարածքի(ների), անձնակազմի և հայտատուի ենթակապալառուների ուսումնասիրության մատչելիության ապահովումը,

2) գանգատների հետաքննության համար,

3) դիտորդների մասնակցության համար, եթե կիրառելի է:

- Չօգտագործել արտադրանքն այնպես, ինչը կարող է հեղինակազրկել ՍՄ-ին և չանել որևէ հայտարարություն իր արտադրանքի սերտիֆիկացման մասին, որը ՍՄ-ն կարող է համարել մոլորեցնող կամ չթույլատրված:
- Սերտիֆիկացումը կասեցվելու, չեղյալ ճանաչվելու կամ դադարեցվելու դեպքում՝ դադարեցնել բոլոր տեսակի գովազդային նյութերի օգտագործումը, որոնք պարունակում են որևէ հղում այդ մասին և ձեռնարկել սերտիֆիկացման սխեմայով պահանջվող գործողությունները (օրինակ, սերտիֆիկացման փաստաթղթերը վերադարձնելը) և սահմանված այլ միջոցառումները:
- Եթե հայտատուն սերտիֆիկացման փաստաթղթերի պատճենները տրամադրում է ուրիշներին, ապա այդ փաստաթղթերը պետք է կրկնօրինակվեն ամբողջությամբ կամ ինչպես սահմանված է սերտիֆիկացման սխեմայով:
- Իր արտադրանքի սերտիֆիկացումը լրատվամիջոցների հետ հաղորդակցության միջոցներում վկայակոչելիս, ինչպիսիք են՝ փաստաթղթերը, բրոշյուրները կամ գովազդումը, համապատասխանել ՍՄ-ի կամ սերտիֆիկացման սխեմայով սահմանված պահանջներին:
- Համապատասխանել սերտիֆիկացման սխեմայով սահմանված համապատասխանության նշանների օգտագործմանը և արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացվող բոլոր պահանջներին:
- Պահպանել իրեն հայտնի դարձած սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վերաբերյալ բոլոր գանգատների գրառումները և ՍՄ-ի պահանջի դեպքում տրամադրի դրանք, և

1) ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ նման գանգատների և սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վրա ազդող արտադրանքի հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ,

2) փաստաթղթավորել ձեռնարկված գործողությունները:

- Անհապաղ տեղեկացնել ՍՄ-ին այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սերտիֆիկացման պահանջներին համապատասխանելու իր կարողության վրա:
- Մակնշել արտադրանքը շուկայում շրջանառության միասնական նշանով:
- Գրանցել համապատասխանության գնահատման օբյեկտների, այդ թվում՝ սերտիֆիկացման սխեմաներով սահմանված պահանջների կատարման վերաբերյալ բողոքները և սերտիֆիկացման մարմնի պահանջով տրամադրել վերջինիս: Քննարկել բողոքները և ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ կապված այդ բողոքների և համապատասխանության գնահատման օբյեկտներում հայտնաբերված ցանկացած թերությունների հետ, որոնք ազդում են սերտիֆիկացման պահանջների կատարման վրա, փաստաթղթավորել ձեռնարկված գործողությունները:

- Տեղեկացնել սերտիֆիկացման մարմնին այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել համապատասխանության գնահատման օբյեկտների պահանջների կատարման վրա:

«ԱՐՄՍԵՐՏ» ՍՊԸ Տնօրեն _____ Ա. Աբրահամյան

Արտադրանքի սերտիֆիկացման
մարմնի ղեկավար Բ. Մալյան